Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
մարտի 29-ի նիստի N 12
արձանագրային որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կոտայքի մարզն ունի 67 համայնք, այդ թվում՝ 7 քաղաքային: Մարզի փաստացի տարածքը կազմում 2076 քառ. կմ:

Կոտայքի մարզի բնակչության թիվը 2011թ. կազմել է 283.5 հազար մարդ, որը կազմում է հանրապետության ողջ բնակչության 8.6%-ը, որից 159.2 հազարը քաղաքաբնակներ են (56.1%), 124.3 հազարը՝ գյուղաբնակներ (43.9%): Նախորդ տարվա համեմատ մարզի բնակչության թիվը աճել է 1400-ով:

2011թ. ծնունդների թիվը մարզում կազմել է 3851 մարդ, իսկ մահացածների թիվը՝ 2246: Բնական աճը կազմել է 1605 մարդ: 2012 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում մարզում գրանցվել է 402 ծնունդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 257-ով՝ կազմելով 1934, ամուսնալուծությունների թիվը ավելացել է 16-ով՝ հասնելով 225-ի:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2011թ. մարզում (ընթացիկ գներով) թողարկվել է 104մլրդ. 683մլն. դրամի արդյունաբերական արտադրանք նախորդ տարվա 84մլրդ. 986 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 23.1%:

2011թ. մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 103 մլրդ. 603մլն. դրամ նախորդ տարվա 84մլրդ. 473 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 22.6%:

Արտադրանքի իրացման ծավալների մեջ հաշվետու ժամանակաշրջանում իրացումը ներքին շուկայում կազմել է 83մլրդ. 731 մլն. դրամ, իսկ արտահանումը՝ 19մլրդ 872մլն. դրամ: 2011թ. արտահանման ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 6մլրդ. 168մլն. դրամով կամ աճը կազմել է 45%: Արտահանվել են հիմնականում մրգահյութեր և բանջարահյութեր, գինիներ, կոնյակ, ցեմենտ, հանքային ջրեր, ապակե տարաներ, պատրաստի մետաղական արտադրատեսակներ և այլն:

Դրական է գնահատվում արտահանման ծավալների աճը, որով բնութագրվում է մեր մարզի արտադրանքի մրցունակ լինելը արտաքին շուկաներում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2011 թվականին լուրջ աշխատանք է կատարվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ: Նախատեսված 1մլրդ 618մլն. դրամի դիմաց հավաքագրվել է շուրջ 1մլրդ. 658մլն. դրամի սեփական եկամուտ կամ եկամուտների պլանը կատարվել է 102.4%-ով:

2012 թվականի առաջին երկու ամիսների տվյալներով մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 111.3%-ով:

Մարզի համայնքները և ենթակա հիմնարկները 2011 թվականին և 2012 թվականի առաջին երկու ամիսների ընթացքում աշխատավարձի և սոց.վճարների գծով պարտքեր չունեն:

Վերջին երեք տարիներին պետական բյուջեից համայնքներին հատկացված ֆինանսական համահարթեցման դոտացիաները անընդհատ աճել են և 2011թ-ին այն կազմել է 2մլրդ. 857մլն. դրամ, որը կազմում է համայնքների ընդհանուր եկամուտների ավելի քան 60 %-ը:

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների տվյալներով պետական բյուջեից համայնքներին նախատեսված 483 մլն. 882 հազ. դրամ ֆինանսական համահարթեցման դոտացիաները տրամադրվել են ամբողջությամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Կոտայքի տարածքային բաժանմունքներում 2011 թվականի ընթացքում հաշվառել է 16971 քաղաքացի, հաշվառումից հանվել են 3826-ը, իսկ ՀՀ քաղաքացիության անձնագրեր է տրվել 30647 քաղաքացու:

2012 թվականի երկու ամիսների ընթացքում հաշվառվել է 2235 քաղաքացի, հաշվառումից հանվել է 956-ը, իսկ ՀՀ քաղաքացիության անձնագրեր են տրվել 6090 քաղաքացու:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2011 թվականին մարզպետարանի ենթակայությամբ գործել են 93 կրթական հաստատություններ:

Մարզի հանրակրթական դպրոցներում 2011-12 ուսումնական տարում կոմպլեկտավորվել է 1674 դասարան՝ 34688 աշակերտներով: Այս ուսումնական տարում առաջին դասարան է ընդունվել 3360 աշակերտ, որը նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ նվազել է շուրջ 95–ով: Դեկտեմբեր ամսին մարզի 1 ավագ ու 2 հիմնական դպրոցներում /Հրազդանի N1, N11, N4/ փորձնական ներդրվել է աշակերտների հաշվառման տեղեկատվական համակարգ, որի նպատակն է ամողջությամբ վերահսկել աշակերտների շարժը:

Այս համակարգը արդյունավետ աշխատելու դեպքում այն ներդրվելու է բոլոր դպրոցներում:

2011-2012 ուստարում աշխատանքներ են տարվել հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և նրանց հանրակրթական կամ հատուկ հանրակրթական հաստատություններ վերադարձնելու ուղղությամբ: Այժմ վկայագրված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 308 երեխաներ, նրանցից 78–ը վկայագրվել են 2011 թվականին:

Մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 3400 ուսուցիչներ, որոնց ավելի քան 88% ունի բարձրագույն մանկավարժական, շուրջ 10%-ը՝ միջին մասնագիտական կրթություն: Լեռնային և բարձր լեռնային գոտում գտնվող ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 1100 ուսուցիչներ:

Մանկավարժական կադրերի թափուր աշխատատեղերը համալրվել են մրցութային կարգով: 2011թ. ընթացքում ուսուցիչների մրցույթներ տեղի են ունեցել 60-ից ավել դպրոցներում, ժամանակի հրամայականն է դպրոցներում ունենալ բարձրակարգ մասնագետ-ուսուցիչներ, որին հասնելու համար անհրաժեշտ է մրցույթները անցկացնել բացառապես անաչառ: Գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթներ են

անցկացվել թվով 53 դպրոցներում: Մրցույթների արդյունքում ընտրված 47 տնօրենների հետ սահմանված կարգով կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Աշխատանքից ազատվել են 18 տնօրեններ:

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի N 929-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն մարզպետարանի ենթակայության անորոշ ժամկետով պայմանագրի հիման վրա պաշտոնավարող թվով 41 տնօրեններից 7-ը 2011թ. օգոստոսի 1-ի դրությամբ ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր չեն ստացել:

2011թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ թվով 33 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կայացել են համապատասխան մրցույթները: Միայն Թեղենիքի միջնակարգ դպրոցի տնօրենի մրցույթը չի կայացել: Դպրոցի խորհրդի կազմի փոփոխությունից հետո հայտարարվել է նոր մրցույթ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնական զենքի պահպանման սենյակներ ունեցող դպրոցների թիվը հասել է 91-ի, իսկ դրանցից 83-ն արդեն համալրվել է ուսումնական զենքով:

Դպրոցներում հաջողությամբ իրականացվում է Շախմատ առարկայի դասավանդումը:

Մարզի բոլոր միջնակարգ ու հիմնական դպրոցներն ապահովված են շախմատի դասավանդման համար անհրաժեշտ պարագաներով:

Դպրոցներում ուսումնանյութատեխնիկական բազան հարստացնելու նպատակով «Փյունիկ» հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականի ընթացքում մարզի 19 դպրոցներին հատկացվել են «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն» առարկաների լաբորատոր սարքավորումներ:

Մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները՝ կրթակարգի պահանջներին համապատասխան, ապահովված են համակարգիչներով և ինտերնետ կապով: Դպրոցներն ունեն տարբեր առարկաների էլեկտրոնային ձեռնարկներ, որոնց հիման վրա դպրոցների մեծ մասում ստեղծվել են նաև էլեկտրոնային գրադարաններ:

Այժմ մարզում գործում են 47 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 18-ը հիմնովին վերանորոգված են: Կատարված աշխատանքների արդյունքում շուրջ 5321 սան հաճախում են նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի միջոցներով 2012 թվականի փետրվար ամսից մարզի 52 դպրոցներում սկսվել է սննդի տրամադրումը 1-4-րդ դասարանների աշակերտներին:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պարտադիր ատեստավորման նպատակով 2011 թվականին վերապատրաստվել են մարզի հանրակրթական դպրոցներում աշխատող ուսուցիչների շուրջ 20%-ը: Ընդհանուր առմամբ վերապատրաստվել է 462 ուսուցիչ, 3 ուսուցիչների գործեր հետ են ուղարկվել տնօրենների կողմից սխալ ներկայացնելու պատճառով (2 ուսուցիչ ընդունվել են որպես փոխարինողներ, 1-ը գտնվում է նախածննդյան և հետծննդյան արձակուրդում):

Ուսուցիչների փաստաթղթային ատեստավորումով ընթացիկ տարում ատեստավորվել են 459 ուսուցիչներ:

Հիմնախնդիրներ

- Դպրոցների ֆինանսավորման նոր բանաձևին անցնելու արդյունքում հիմնական և միջնակարգ դպրոցներում նվազել է ֆինանսավորման չափը և մի շարք դպրոցներում ուսուցիչների աշխատավարձը նույնպես նվազել է:

- Հարկավոր է սոցիալական փաթեթ տրամադրել ուսումնական հաստատության բոլոր աշխատողներին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

2011թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի նպաստառու ընտանիքների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 1240-ով. պատճառը ընտանեկան

նպաստների հասցեականության բարձրացման նպատակով ՀՀ կառավարության 23.12.2010թ. N 1763-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններն են:

Սոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությամբ նախորդ տարի հրատապ դրամական օգնություն է տրամադրվել 2930 ընտանիքի, որոնց կարիքավորության միավորը 30.00-ից ցածր է եղել:

2012թ. մարտի 1-ի դրությամբ մարզի նպաստառու ընտանիքների թիվը 7569 է: Սոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությամբ հրատապ դրամական օգնություն է տրամադրվել 291 ընտանիքի:

2012թ. մարտի 1-ի դրությամբ բնակարանի կարիք ունեն ժամանակավոր կացարաններում բնակվող 326 փախստական ընտանիքներ:

1999-2012թ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի զոհված և հաշմանդամ դարձած 201 անապահով զինծառայողների ընտանիքներ:

Դեռևս բնակարանի բարելավման կարիք ունեն 253 զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ:

Հիմնախնդիրներ

ՀՀ Կառավարության կողմից <<Պետական նպաստ>> ծրագրում կատարված մի շարք փոփոխությունների արդյունքում համացանցի միջոցով գործող 5 համակարգչային ծրագրերի արդյունավետ շահագործման նպատակով անհրաժեշտ է մարզի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները վերազինել ժամանակակից համակարգչային տեխնիկայով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարզի առողջապահական հաստատությունները ներկայացված են 40 ընկերություններով, որոնցից 35-ը 100 տոկոս պետական բաժնեմասով, իսկ 5 ընկերությունների բոլոր բաժնետոմսերը սեփականության իրավունքով անհատույց հանձնվել են համայնքներին:

Մարզի առողջապահության համակարգի հիվանդանոցային ծառայության մահճակալային ֆոնդը 250 է, աշխատողների թիվը՝ 1784:

Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունների միջև 2011 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված պայմանագրի շրջանակներում շուրջ 89 մլն. 682 հազ. դրամի համապատասխան բժշկական սարքավորումներով հագեցված թվով 6 շտապ օգնության մեքենաներ են տրամադրվել «Աբովյանի ԲԿ», «Հրազդանի ԲԿ», «Չարենցավանի ԲԿ», «Նաիրիի ԲԿ» ՓԲԸ-ներին և «Նոր Հաճընի պոլիկլինիկա»ՊՓԲԸ-ին:

Լիարժեք կայացած է 2008 թվականից ներդրված «ծննդօգնության պետական հավաստագրերի» համակարգը, իսկ 2011 թվականին ներդրվել է նաև «երեխաների առողջության պետական հավաստագրերի և անձնագրերի» տրամադրման համակարգը: 2011թ. ընթացքում մարզի ծննդատներում գրանցվել է 2905 ծնունդ, որը կազմում է հանրապետությունում գրանցված ծնունդների ընդհանուր թվի / 43297 ծնունդ / 7 տոկոսը: Մայրական մահացության դեպք հաշվետու տարում չի գրանցվել: Սակայն դժբախտաբար 2012 թվականի փետրվարի 25-ին Աբովյանի ծննդատանը գրանցվել է մայրական մահվան դեպք (ք. Աբովյանի բնակչուհի 1986 թվականին ծնված Ֆլորա Հրաչի Աբգարյան, դատաբժշկական փորձաքննության նախնական եզրակացությունը՝ Շնչահեղձություն արյան զանգվածներով), որի կապակցությամբ Քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ:

Հունվար և փետրվար ամիսների ընթացքում մարզի ծննդատներում գրանցվել է 402 ծնունդ (2011թ. նույն ժամանակահատվածում 462 ծնունդ):

Մարզի առողջապահության համակարգի առողջության առաջնային պահպանման ծառայությունում որակական բարձրակարգ սպասարկում իրականացնելու համար բոլոր

ընկերությունները համալրված են անհրաժեշտ մասնագետներով՝ ընտանեկան բժիշկներով և բուժքույրերով: Այս պահին վերամասնագիտացված են շուրջ 143 բժիշկ և 153 բուժքույր:

2011թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի առողջապահական ընկերությունների կրեդիտորական պարտքերը կազմել են մոտ 3.2 մլն դրամ /դեղորայքի և ԲՆԱ-ի ընթացիկ պարտք/: Աշխատավարձի պարտքեր չեն գոյացել:

2011 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի և ԼՂՀ Շահումյանի շրջանի միջև փոխադարձ համագործակցության ծրագրի շրջանակներում մարզի առաջատար բժիշկ-մասնագետների կողմից կազմակերպվել է այցելություն Քարվաճառի բուժմիավորում և իրականացվել է Շահումյանի շրջանի բնակչության անվճար բժշկական օգնություն և սպասարկում: Մասնավորապես `նյարդաբանի, սրտաբանի և ակնաբույժի կողմից բժշկական զննության է ենթարկվել 100-ից ավել հիվանդ:

Սույն թվականի հունվարի 24-ից <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից շուրջ 39 մլն. դրամի հիմնանորոգման աշխատանքներ են սկսվել <<Աբովյանի ծննդատուն>> ՊՓԲԸ-ի մանկաբարձական բաժանմունքի ծննդաբերական և հետծննդյան հատվածներում, որը նախատեսվում է ավարտել մինչև հունիսի 24-ը: Ընթացիկ տարում Համաշխարհային Բանկի վարկային ծրագրով նախատեսվում է Աբովյանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասի հիմնանորոգումը և սարքավորումների արդիականացումը, ինչպես նաև Լեռնանիստի ԲԱ, Սոլակի ԱԱՊԿ, Ակունքի ԱԱՊԿ և Վերին Պտղնիի ԱԱՊԿ–ների շենքերի կառուցումը:

Հիմնախնդիրներ

Մարզի առողջապահության համակարգի հիմնախնդիրներից է հիվանդանոցային համակարգի (Նաիրիի ԲԿ, Չարենցավանի ԲԿ, Գառնիի ԱԿ) և Հրազդանի մարզային արյան բանկի հիմնանորոգումը, արդիականացումը և որակյալ բժշկական կադրերով համալրումը: Որոշ բժշկական մասնագիտությունների թափուր պաշտոնների մրցույթներ մարզի առողջապահական ընկերությունների կողմից արդեն իսկ հայտարարված են:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համագործակցելով երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների մասնագետների հետ՝ մարզում իրականացվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական կարիքների գնահատման, երեխաների սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնողական ծրագրերի կազմման և իրականացման աշխատանքներ:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգում հաշվառված են թվով 235 երեխաների տվյալներ:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թվում են նաև մարզի 642 հաշմանդամ երեխաներ:

2011թ. ընթացքում Կոտայքի մարզում բնակվող 11 դիմումատու քաղաքացիներ հաշվառվել են որպես երեխա որդեգրել ցանկացող թեկնածուներ և հաշվառման է վերցվել որդեգրման ենթակա 9 երեխա: 2012թ. փետրվար ամիսներին հաշվառման է վերցվել որդեգրման ենթակա 1 երեխա:

Աբովյան քաղաքում ունենք 1 խնամատար ընտանիք, որտեղ խնամվում են ԱԾԽՄ 2 երեխաներ:

Հայտնաբերված հանրակրթությունից դուրս մնացած 24 երեխաների հետ աշխատանք է տարվել և նրանցից 13-ի կրթություն ստանալու իրավունքը վերականգնվել է, 2012թ. ընթացքում հայտնաբերվել է դպրոց չհաճախող 9 երեխա, որոնցից 2-ը այժմ սովորում են դպրոցում: Այժմ համայնքներում տարվում են համապատասխան աշխատանքներ՝

հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին բացահայտելու և նրանց կրթություն ստանալու իրավունքը վերականգնելու համար:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզում գյուղատնտեսությունը վարվում է փոքր գյուղացիական տնտեսությունների միջոցով:

Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1-1.3 հա գյուղատնտեսական հողատեսքեր: Մեկ տնտեսությանը պատկանող հողատարածքը մասնատված է 3-4 հողակտորի: Ստեղծված իրավիճակը հնարավորություն չի տալիս կիրառել արտադրության ժամանակակից տեխնոլոգիաներ, դժվարություններ են առաջանում արտադրության մեքենայացման, ցանքաշրջանառության կիրառման բնագավառում և հետևանքն այն է, որ արտադրությունը դառնում է անարդյունավետ և վնասաբեր: Այս իրավիճակից դուրս գալու նախապայմաններից մեկը տնտեսությունների խոշորացումն է և հողակտորների կոնսոլիդացիան, որի ուղղությամբ տարվող աշխատանքները մեր և համայնքների ղեկավարների ուշադրության կենտրոնում է, բայց ցավոք դեռևս շոշափելի արդյունքներ չկան:

2011թ. բերքի տակ կատարվել է 13504 հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք կամ օգտագործվել է վարելահողերի 35.6 տոկոսը՝ անցած տարվա 34.3 տոկոսի դիմաց:

Նախորդ տարվա համեմատ ավելացել է գյուղատնտեսական մշակաբույսերից ստացված համախառն բերքը:

2011թ. փաստացի հավաքված գյուղատնտեսական մթերքների ծավալի մասին

գ/տ մշակաբույսեր	2011թ.				2010թ.		2011-ը 2010-ի նկատմամբ	
	ընդամենը ցանքատարած. /հա/	փաստացի հավաքվել է /հա/	համախ. բերքը /տոննա/	միջին բերքը գ/հա	համախ. բերքը /տոննա/	միջին բերքը գ/հա	համախ. /տոննա/	միջին բերքը գ/հա
հացահատիկ	9380	9378	21083.0	22.5	11031.0	13.2	+10052	+9.3
կարտոֆիլ	692	692	15881.5	229.5	14054.0	196. 8	+1827.1	+32.7
բանջարեղեն	1162	1162	22000.0	189.3	21015.1	155.3	+984.9	+34.0
պտուղ	4351	3818	13402.0	35.1	8587.9	22.4	+4814.1	+12.7
խաղող	349	349	490.7	14.0	377.7	10.8	+113.0	+3.2
կուտակվել է խոտ	-	-	52726.0	-	49600.0	-	+3126.0	-
կուտակվել է ծղոտ	-	-	8879.0	-	8710.0	-	+169.0	-

2011 թվականին աշնանացանի ցանք կատարելու համար ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել է 238 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու: Նշված սերմացուն պայմանագրով հատկացվել է մարզի գյուղացիական տնտեսություններին, որոնց միջոցով կատարվել է շուրջ 800 հա աշնանացանի ցանք:

Նախորդ տարվա համեմատ աշնանացանի ցանքատարածությունները ավելացել են 1080 հա-ով:

Ընթացիկ տարում նախատեսվում է կատարել 8500 հա գարնանացանի ցանք, այդ թվում՝ հացահատիկ և ընդեղեն - 5800 հա, կարտոֆիլ - 850 հա, բանջարեղեն – 1300 հա, բազմամյա խոտերի ցանք – 550 հա:

Գարնանացանի աշխատանքներն իրականացնելու համար կպահանջվի ավելի քան 200 տոննա գարնանացան ցորենի, 500 տոննա գարնանացան գարու, 500 տոննա հաճարի սերմացու, ավելի քան 2100 տոննա կարտոֆիլի տնկանյութ, 15 տոննա բազմամյա խոտի, 1000 - 1500 կգ բանջարեղենի / տարբեր տեսակի / սերմացուներ: Պահանջը լրացնելու

համար պետք է ձեռք բերվի 130 տոննա գարնանացան ցորենի, 350 տոննա գարնանացան գարու, 100 տոննա հաճարի, 6 տոննա բազմամյա խոտի սերմացուներ:

Կառավարության կողմից մարզին հատկացվել է 1500 տոննա ազոտական պարարտանյութ, 350 տոննա դիզ. վառելանյութ:

Առաջընթաց է նկատվում անասնաբուժական միջոցառումների իրականացման բնագավառում, մարզի համայնքները հիմնականում ապահովված են անասնաբույժներով, որոնք իրենց կողմից պատվիրակված լիազորությունները կատարել են ամբողջությամբ, սակայն նրանց աշխատանքներում դեռևս կան բազմաթիվ բացթողումներ: Այս գործում լուրջ անելիք ունի նոր կազմավորվող անասնաբուժասանիտարիայի սննդի անվտանգության և բուսաբուծության ծառայությունների մարզային կենտրոնը:

Նախորդ տարվա համեմատ 2011թ. հունվարի 1-ի դրությամբ ավելացել է անասնագլխաքանակը:

	²Ý í ³ ÝáõÙÁ	01.01.2010	01.01.2011	ß»ÕáõÙÁ +	-
1	խոշոր եղջերավոր անասուն	47954	51374	+3420	
	որից՝ կովեր	23688	24373	+685	
2	մանր եղջերավոր անասուն.	32201	33670	+1469	
3	խոզեր	12628	15109	+2481	
4	թռչուններ	998668	894633		-104035
5	Մեղվաընտանիք	17959	19868	+1909	

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքները ներառել են հիմնականում աղբահանության. ընդերքօգտագործման, ջրօգտագործման, անտառտնտեսավարման, շրջակա միջավայրին առնչվող առկա խնդիրների և թերությունների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների կատարումը՝ ապահովելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները:

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ մարզում բնապահպանական առումով խիստ պրոբլեմատիկ է դարձել թափոնների կառավարման և տեղադրման աշխատանքների կազմակերպումը: Թեպետ վերջին տարիներին մարզպետարանի կողմից զգալի ջանքեր են գործադրվել խնդրի կարգավորման համար, սակայն արդյունքները դեռևս բավարար չեն: Ճանապարհաշինարարական ձեռնարկությունների կողմից իրականացված աշխատանքները ճանապարհամերձ հատվածներում սանիտարական մաքրման կազմակերպման ուղղությամբ չեն համապատասխանում ներկայիս պահանջներին: Այս գործում ամենօրյա հետևողականություն չի ցուցաբերվում նաև համայնքապետերի կողմից: Տարվա ընթացքում միայն 5 համայնքապետերի /Հրազդան, Ակունք, Արզական, Սոլակ, Ջովունի / կողմից է չսահմանված վայրերում և տեղերում աղբաթափման համար կիրառվել վարչական տուգանքներ, 20-40 հազ. դրամի չափով:

Վերջին երկու տարիների ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հատկապես ճանապարհամերձ տարածքներում գոյացած աղբակույտերի վերացմանը: Դրանք հիմնականում ընդգրկել են մարզի կենտրոնական, հանգստի գոտու և զբոսաշրջության երթուղիները:

Չնայած վերջին տարիներին մարզում ավելացել է հանքարդյունահանման լիցենզիաներ ձեռք բերած կազմակերպությունների թիվը, դրանք տրված են թվով 70 պինդ օգտակար հանածոների հանքավայրերի տեղամասերի համար, սակայն դրանցից շահագործվել են 36-ը, չեն շահագործվել 8-ը, իսկ մնացած 26-ը գտնվում են փաստաթղթային ձևակերպումների փուլում: 29.11.2011թ. գրությամբ դիմվել է

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին՝ թվով 12 կազմակերպությունների զրկելու հանքային իրավունքից, որոնց 2005-2008թթ. ընթացքում տրամադրվել են պինդ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման լիցենզիաներ, սակայն նրանց կողմից տվյալ ժամանակահատվածում չեն կնքվել հողի վարձակալական պայմանագրեր և չեն իրականացվել շահագործման աշխատանքներ:

2011 թվականին մարզում տրվել են 36 ջրօգտագործման թույլտվություններ, այդ թվում՝ 9-ը խմելու - կենցաղային, 13-ը ոռոգման, 6-ը ՀԷԿ-երի, 6-ը արդյունաբերական, 2-ը ձկնաբուծության նպատակներով: Ջրերի էկոլոգիական պահպանության առումով առաջնահերթ խնդիրներից է կեղտաջրերի մաքրման և հեռացման աշխատանքների կազմակերպումը: Մարզում մաքրման կայանների բացակայության և կոյուղատարների վթարների հետևանքով, կեղտաջրերը վերջնականապես հեռացվում են Դալար, Մարմարիկ, Ծաղկաձոր, Հրազդան գետերի միջոցով, որը ուղղակի էկոլոգիական աղետ է:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2011 թվականին պետական բյուջեի միջոցներով Կոտայքի մարզպետարանին հատկացվել է 308.0 մլն. դրամ, շարունակական համարվող 9 կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների համար:

2012 թվականի պետ բյուջեով Կոտայքի մարզին կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է **1 մլրդ. 209մլն դրամ**
այդ թվում՝

- Մարզպետարանի պատվիրատվությամբ հիմնանորոգվող 8 կրթական օբյեկտների համար **184.5 մլն. դրամ:**
- ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ հիմնանորոգվող 11 կրթական, 1 մշակութային և 2 մարզական օբյեկտների համար **1 մլրդ. 25 մլն. դրամ:**

Պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 3-ի թիվ 108-Ն որոշմամբ հատկացվեց 1 մլրդ. 318 մլն. դրամ մարզի համայնքներում խմելու և ոռոգման ջրագծերի կառուցման, գազաֆիկացման իրականացման. ճանապարհների ասֆալտապատման, բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների, մշակութային և կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների համար :

Մրցույթի արդյունքում տնտեսված գումարներով լրացուցիչ երկու համայնքներում ևս կառուցվեցին ոռոգման ջրագծեր:

Ընդհանուր հաշվարկով պահուստային ֆոնդի գումարներով, տվյալ ծրագրով հիմնանորոգման աշխատանքներ իրականացվեց մարզի 39 համայնքներում:

ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1436-Ն որոշման համաձայն մարզի 38 համայնքներում առաջնահերթ լուծում պահանջվող հրատապ ծրագրերի իրականացման համար, (խմելու և ոռոգման ջրագծերի կառուցման, գազաֆիկացման իրականացման, ճանապարհների ասֆալտապատման, բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների, մշակութային և կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների համար) հատկացվեց ևս 1 մլրդ. 318 մլն. դրամ:

Ներկա դրությամբ ամբողջ ծրագրի հիմնանորոգման աշխատանքները արված է միջին հաշվարկով 51.0 %-ով, իսկ ծրագիրի ավարտը նախատեսված է 2012թ.հուլիս ամիսը:

2011 թվականին կիրառման մեջ մտավ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին հարող տարածքներում առևտրի և սպասարկման օբյեկտների նախագծային առաջարկներից կազմված կատալոգը, որի նպատակն է կարգավորել մայրուղիների երկայնքով իրականացվող անկառավարելի կառուցապատման գործընթացը:

2011 թվականի ընթացքում մարզի տարածքում հայտնաբերվել են առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացվող շինարարության 21 օբյեկտներ:

Խախտումներ թույլ տված 9 կառուցապատողներ ենթարկվել են վարչական պատասխանատվության:

Չնայած այն հանգամանքին, որ նվազել են հողազավթման և ապօրինի շինարարություն կատարելու դեպքերը, սակայն պետք է նշենք, որ շարունակվում են գյուղատնտեսական նշանակության հողերի վրա ինքնակամ կառուցապատումները. պատճառը մեկն է՝ թույլ է համայնքների ղեկավարների, մարզպետարանի և քաղաքաշինական պետական տեսչության փոխհամագործակցված աշխատանքը: Ընթացիկ տարում այս հարցը հատկապես լինելու է իմ ուշադրության կենտրոնում:

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2011 թվականին բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բնագավառում ՀՀ պետական և համայնքային բյուջեների, ինչպես նաև տարբեր հիմնադրամների կողմից տրամադրված 4 մլրդ 219 մլն. դրամի հասնող միջոցներով կառուցվեցին շուրջ 205 կմ խմելու ջրագծեր -3մլրդ. 788մլն. դրամ, 7 կմ կոյուղատարներ- 197մլն. դրամ, 3 կմ գազատար 46մլն դրամ, 150 խ.մ տարողությամբ մեկ օրվա կարգավորիչ ջրամբար, 1 պոմպակայան, ամբողջությամբ վերակառուցվեց Մաքրավանի /Հրազդան/ կենտրոնական պոմպակայանը և վերանորոգվեցին թվով 50 բազմաբնակարան շենքերի մուտքեր և տանիքներ- 183մլն. դրամ:

- ՀՀ պետական բյուջեից տրամադրված 605մլն. դրամով աշխատանքներ իրականացվեցին մարզի 21 համայնքներում:

- Ասիական զարգացման բանկի կողմից Աբովյան, Ծաղկաձոր և Քաղսի համայնքներում ներդրվեց 1մլրդ. 69մլն. դրամ: Համաշխարհային բանկի կողմից տրամադրված 2 մլրդ 272 մլն դրամով աշխատանքներ տարվեցին Հրազդան /2.25 մլդ.դրամ/ և Եղվարդ /47.6 մլն դրամ/ համայնքներում:

- <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի միջոցներով Ալափարս, Ջորավան և Թեղենիք համայնքներում իրականացվեց 24 մլն դրամի աշխատանքներ:

- Մարզի համայնքների կողմից սեփական միջոցներով ենթակառուցվածքների ոլորտում կատարվեցին 160 մլն դրամի աշխատանքներ;

- Հայաստանի սոցիալական ներդրումներ հիմնադրամի կողմից տրամադրված 42.0 մլն դրամ գումարով հնարավոր եղավ ավարտին հասցնել ՀՀ պետբուջեի /20.0 մլն. դրամ/ և համայնքի /30.5 մլն դրամ/ կողմից տրամադրված միջոցներով սկսված Գեղաշեն համայնքի մայր ջրատարի կառուցումը:

- USAID-ի կողմից տրամադրված 17մլն. 500 հազ. դրամով Կապուտան համայնքում կառուցվեց նոր ջրամատակարարման համակարգ:

Կատարված ներդրումների շնորհիվ մարզում ջրամատակարարման միջին տևողությունը 6 ժամից հասավ 11-ի:

Մարզպետարանի մասնագետները քաղաքաշինության նախարարության և Եվրոպական զարգացման բանկի ներկայացուցիչների հետ համատեղ աշխատանքներ են իրականացրել մարզում կենտրոնացված աղբավայր կառուցելու ուղղությամբ, համաձայն որի 2012-2014 թվականներին նախատեսվում է Հրազդան քաղաքի տարածքում կառուցել նոր ժամանակակից աղբավայր, որի համար ներդրումը կկազմի շուրջ 7 ,0 մլն եվրո:

ՀՀ կառավարության 29.09.2011 թվ. N 1436-Ն որոշմամբ Կոտայքի մարզպետարանին տրամադրված միջոցներով այժմ շինարարական աշխատանքներ են իրականցվում մարզի 7 համայնքներում համաձայն որի նախատեսված է կառուցել շուրջ 7 կմ խմելու ջրագիծ և վերանորոգել թվով 15 բազմաբնակարան շենքերի տանիքներ: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 01.07.2012 թվականը:

Հիմնախնդիրներ

- *Հրազդան քաղաքի ջրամատակարարման համակարգի վերականգնումը ամբողջությամբ ավարտելու համար անհրաժեշտ է շուրջ 3 մլն. ԱՄՆ դոլար:*
- *Մարզի համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման ներտնտեսային ցանցերի վերականգնում:*
- *Բազմաբնակարանային շենքերի ընդհանուր տարածքների վերանորոգում:*
- *Մարզի գերեզմանատների հատակագծերի պատրաստում:*

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզում ընդհանուր օգտագործման պետական և համայնքային ենթակայության ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 593.9 կմ, այդ թվում 48.9 կմ միջպետական, 417.2 կմ հանրապետական և 127.8 կմ տեղական նշանակության:

2011թ. մարզում ճանապարհաշինական աշխատանքներ իրականացվել են հիմնականում Մ-4-Ծաղկաձորի մարզահամալիր ավտոճանապարհի Քաղսի-Հրազդան 4 կմ երկարությամբ հատվածում: Որոշ աշխատանքներ են կատարվել նաև Արզական-Աղվերան ճանապարհի կամուրջի նորոգման և Երևան-Գառնի-Գեղարդ ճանապարհի նստվածքային հատվածների կարգավորման ուղղությամբ:

Մարզում դեռևս առկա են դժվարանցանելի որոշ ճանապարհահատվածներ (Արագյուղ-Թեղենիք, Արգել-Կարենիս-Չարենցավան), վերջնական լուծում չի ստացել Երևան-Գառնի-Գեղարդ ավտոճանապարհի սողանքային հատվածների կարգավորման հարցը:

Մարզի որոշ ավտոճանապարհներ լիովին կահավորված չեն պահանջվող նորմերին համապատասխան ճանապարհային նշաններով, հատկապես շատ են բացակայում տեղեկատվական բնույթի նշանները:

2012 թ. հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեից հատկացված գումարների սահմաններում մարզպետարանի պատվիրակությամբ իրականացվել են մարզային ենթակայության 123 կմ ավտոճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքները՝ 20.4 մլն. դրամ գումարով:

Հիմնախնդիրներ

ա) ճանապարհների նորոգման աշխատանքների ընդգրկում առաջիկա ծրագրերում՝

- *Արգել-Կարենիս-Չարենցավան-Ֆանտան*
- *Նոր Գեղի-Արզական-Հրազդան*

բ) անմխիթար վիճակում գտնվող ճանապարհների հիմնանորոգում՝

- *Արագյուղ-Թեղենիք*
- *Հանրապետական ճանապարհ - գ. Գեղարդ*
- *Երևան-Սևան մայրուղուց – Աղվերանի հանգստյան գոտի*

գ) Հաշվի առնելով մարզային ցանցի կտրտվածությունը և ելնելով նպատակահարմարությունից մարզային որոշ ճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքների իրականացում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից՝

- *Հ-4 – Բուժական - 1.9 կմ*
- *Հ-4 – Սարալանջ - 1.1 կմ*
- *Հանրապետական ճանապարհ - գ. Գեղարդ - 3.0 կմ*

Մարզում կարևոր հիմնախնդիր է համարվում գործազրկության մեծ ծավալը, հետևաբար աշխատատեղերի ստեղծումը և առաջարկվում է մարզի մի քանի քաղաքային համայնքներում (Նոր Հաճըն, Բյուրեղավան, Չարենցավան), որոնք գտնվում են

ÐÐ Îá ï ³ÛùÇ Ù ³ñ½å» ï Ç 2011 Ã. ¨ 2012 Ã. ÑáõÝí ³ñ-÷» ï ñí ³ñ ³ ÙÇëÝ»ñÇ Ñ ³ßí» ï íáõÃÛáõÝÁ

մայրաքաղաքից ընդամենը 10-30 կմ հեռավորության վրա, ստեղծել արտոնյալ պայմաններ գործարարությունը խթանելու համար, որն էլ կնպաստի մայրաքաղաքի խիստ հագեցվածությունը որոշ չափով բեռնաթափելուն:

ÐÐ Îá ï ³ÛùÇ Ù ³ ñ½å» ï Ç 2011 Ã. ¨ 2012 Ã. ÑáõÝí ³ ñ-÷» ï ñí ³ ñ ³ ÙÇëÝ»ñÇ Ñ ³ ßí» ï íáõÃÛáõÝÁ